

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՀԱՆԳԻՒՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍԷ

Ժառ. Վարժարանի և Ընծայարանի բերանացի և զբաղող ամառվերջի քննությունները կատարուեցան 1943 Յուլիս 28-Յուլիս 3ի շարժումն ընթացքին:

Յուլիս 22ին, Հինգշաբթի յետ միջօրէի ժամը 5ին, տեղի ունեցաւ Ժառ. Վարժ.ի Ամառվերջի Հանդէսը, նախագահութեամբ Գեր. Տ. Կիրեղ Ը. Վրդ.ի, Առաջին մասը՝ Իմացական Մրցանքներ, բացառեցաւ Ժառանգաւորաց քայքայելով. և շարունակուեցաւ այսպէս. — Ա. Ասեմախօսական Մրցանք. տրուած նիւթն էր՝ «Կա՞յ Հայ հոգի մը». մասնակցողներն էին Տիրան Թաշճեան և Սարգիս Կտանեան. երկու ատենախօսներն ալ ներկայացուցին նախ հոգի յղացքը իբրև զօրութիւն, գեղեցիկութիւն, կարգ. ու ցոյց տուին թէ հայկական բոլոր արուեստները հայ ինքնատիպ հոգիի մը հրաշքները կը պատմեն դարերու մէջէն, քննիչ մասնախումբի զատուցութեամբ առաջին յայտարարուեցաւ Տիրան Թաշճեան, Բ. Արսամուհարեան Մրցանք. պարտադիր բերթուած՝ «Ինչպէ՞ս չըտրեմ...» Վ. Տէրեանի. և ուէ բերթուած մը մասնակցողէն ընտրուած. մասնակցողներէն (Յ. Ատուրեան, Ս. Կտանեան, Տ. Թաշճեան) Ս. Կտանեան կը շահի առաջնութիւնը, Գ. Երմեական Մրցանք. պարտադիր մենբեր՝ «Վասն որո՞յ» Հրց. Թրթ. բծ. և երգ մը՝ մասնակցողէն ընտրուած. մասնակցողներէն (Ս. Փինէճեան, Յ. Ատուրեան, Գ. Պարտիզպանեան) Յ. Ատուրեան կը շահի առաջնութիւնը, Գ. Կրական Մրցանք. ինքնադիր բերթուած մը՝ նիւթը մրցողէն. մասնակցողներէն (Ս. Թաղաճեան, Յ. Ատուրեան, Յ. Մէրկէնեան, Յ. Քէշիշեան) Յ. Մէրկէնեան կը շահի առաջնութիւնը:

Երկրորդ մասը հանդէսին — Հրապարակում Տարեկան Արդեանք — 10 վայրկեանի դադարէ մը ետք շարունակուեցաւ «Տէր կեցո՞յ մայրթանքով» Ժառ. Սաներէն խմբերգուած. ապա Բարեկարգ Տրց. Լեռն Ուրարակիր Ալթունեան յանուն ուսանողութեան ուղերձ մը կարդաց, յայտնելով իր և իր ընկերներուն խոր զգացումները հանդէպ Միաբանութեան և ուսուցչական կազմին, «Ով յարկ վսեմ» զպրոցի խմբերգէն յետոյ, Վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեանի տեղեկատուութեան համաձայն յաջողագոյն աշակերտները վարձատրուեցան զանազան կարգի մրցանակներով, իսկ Շուպէնթի «Մօտն հիւսաւորըց աղբիւրին» խմբերգէն վերջ Գերապատիւ նախագահ Հօր շնորհաւորութիւններով և քաջաբերական խօսքերով հանդէսը փակուեցաւ:

ՍՐՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄՈՎԵՐՋԻ ՀԱՆԳԻՒՆՆԵՐ

Յուլիս 18ին, յետ միջօրէի ժամը 5ին, Ժառ. Վարժ.ի բակին մէջ, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Վարժ.ի Մանկապարտէզի Ամառվերջի Հանդէսը, նախագահութեամբ Գեր. Տ. Կիրեղ Ը. Վրդ.ի և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն, ծնողներու և խուռն բաղմութեան: Կոկիկ յայտագրով, Մանկապարտէզի փոքրիկները կատարեցին զանազան արտասանութիւններ, տրամախօսութիւններ, երգեր, հայկական պարեր և չափական մարզանքներ: Նախագահ Հայրը շրջանաւարտ պոտիկներուն բախտը Մանկապարտէզի վկայականներով:

Յուլիս 24ին, յետ միջօրէի ժամը 7.30 ին տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց նախակրթարանի Ամառվերջի Հանդէսը: Մասնաւոր կարգադրութեամբ, Վարժարանի 80 ամեակը տօնուեցաւ այս տարի, և այս առթիւ հանդէսը կատարուեցաւ քաղաքի Կ. Մ. Ս. Ա. Մեծ սրահին մէջ, ձօն յայտագրի մը համաձայն կատարուեցան արտասանութիւններ, բաղմաձայն երգեր՝ ղեկավարութեամբ Հոգ. Տ. Զաւէն Արդ. Տէրունեանի, և օրկի ընկերակցութեամբ զոր կը նուագէր Վարժարանի ուսուցիչներէն Մեծայարգ Տիար Յովհաննէս Խաչատուրեան: Հայկական պարերը զորս այնքան ճիւղնութեամբ պարեցին նախակրթարանի փոքրիկները, իրենց յաջողութիւնը կը պարտին նախակրթարանի վարժուհիներէն Օր. Դերենդուհի Սիւսակեանի ջանքերուն: Պարերուն՝ բեմի ետեւէն, կ'ընկերակցէր երգիչ խումբը՝ Հոգ. Տ. Զաւէն Արեղայի առաջնորդութեամբ, իսկ Վարժարանիս Սանուհեաց և Շրջանաւարտից Միութիւններու անդամներն Օր. Անահիտ Կրպիրեան և Պր. Գրիգոր Մանտոսեան կը նուագէին զաշնակի եւ ջութակի բաժինները: Շրջանաւարտ զատարանը բեմադրեց «Կարմիր ժամուց»էն մաս մը 3 տեսարանով:

Հանդէսը ունէր նախկին Շրջանաւարտից Բաժին մը ևս, ուր Պր. Գրիգոր Գրիգորեան իր խօսքին մէջ ներկայացուց Ս. Թարգմանչաց Վարժարանի կատարած զերը Պաղեստինի Հայ դպրութիւն՝ ընդհանրապէս, և երուսաղէմի համայնքին մէջ՝ մասնաւորապէս, պատրաստելով հայեցի դաստիարակութեամբ օժտուած երիտասարդութիւն մը: Ապա, զաշնակի, ջութակի և օրկի վրայ նուագեցին Օր. Ա. Գրապիրեան, Պր. Գ. Մանտոսեան և Պր. Յովհ. Խաչատուրեան: Օր. Անգինէ Քէշիշեան մեներգեց Մեծամենցի «Ծիծառնիկ»ը և խմբերգներու մէջ մեներգի բաժիններով:

Նախակրթարանի Տեսուչ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան, կարդաց իր տեղեկագիրը զպրոցի այս տարուան աշխատանքներուն և արդիւններուն մասին, և շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց որոնք իրենց օժանդակութիւնը բերին հանդիսաւոր ընելու այս բացառիկ հանդէսը: Շրջանաւարտ զատարանի երկձայն հրաժեշտի խմբերգէն և կարդացուած ուղերձէն յետոյ, 19 շրջանաւարտներուն բախտուեցան վկա-

յականներ՝ ըստ արժանեաց, որոնցմէ՝ 6ը ստացան Պատմ., և մնացեալները մնացորդեան վկայականներ. իսկ բոլորին տրուեցաւ մէյ մէկ նաւակ և ժամագիրք: Ապա ամբողջ դպրոցին և դասերուն մէջ յառաջագէտ եղողներուն տրուեցան զանազան մրցանակներ: Հանդէսը փակուեցաւ նախագահ Հօր օրհնութեան խօսքով:

ՏՕ Ն. Ա. Կ. Ա. Ն. Ք. Ե. Բ. Ե. Ա. Կ. Ա. Ն. Ք.

✽ 18 Յուլիս Կիր. — Գիւտ Տիմյ Ս. Աստուածածնի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կոյսի գերեզմանին վրայ ի Գեթեմանի. քարոզեց Տ. Միւռնոն Վրդ. հաւատեցնելով թէ հրաշքները փաստերն են Աստուծոյ ներկայութեան՝ մարդկային կեանքին մէջ: Աստուած միշտ ներկայ է մարդոց գործերուն վերեւ և անոնց փորձառութիւններուն մօտիկ: Բայց մարդկութիւնը կամաց-կամաց ու քիչ-քիչ կը բացուի ճշմարտութիւններուն:

✽ 25 Յուլիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Կիւրեղ Ե. Վրդ. ցոյց տալով թէ Աստուծոյ վրայ վստահութիւն զնոյ ժողովուրդները միայն պիտի փրկուին իրենց կեանքի տաճնապնդէն, զժուարկացութիւններէն:

✽ 1 Օգոստ. Կիր. — Վարդապետ. հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց պատարագիչ Գեր. Տ. Կիւրեղ Ե. Վրդ. պատմելով Ալլակերպութեան զեղեցիկ դրուագը և յորդորելով հաւատացեալները որ իրենք ալ յաճախ դուրս ելլեն իրենց առօրեայ կեանքի հոգերէն, մաքուր և պայծառ պահելու համար իրենց հոգեկան զգացումները և իրենց մտածումները:

✽ 2 Օգոստ. Բշ. — Մեղեղոց. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզեց Տ. Նորայր Վրդ. «Ո՞վ է մարդ որ կենցիկ և ոչ տեսնէ զմահ՝ բնաբանով, ցոյց տուաւ թէ սովորական մահկանացուներու համար անխուսափելի այս օրէնքը ունի իր բացառութիւնները: Մահէն վեր եւ այն անհատականութիւնները որոնք մարդկութեան բարիքին համար պարտք և զործած են: Անոնք մահէն ալ վերջ կ'ապրին:

✽ 29 Օգոստ. Կիր. — Վերափոխումն Ս. Աստուածածնի. կանխող երկու շաբաթներուն, ամէն առաւօտ, վարդապետ հայրեր և ժառ. սաներ իջան Ս. Աստուածածնայ եկեղեցին Ս. Պատարագին մասնակցելու: Եւ ամէն օր, հաւատացեալներու բազմութիւն մը ներկայ կը գտնուէր Ս. Խորհուրդին: Երէկ երեկոյին, ամբողջ Միաբանութիւնը և աշակերտութիւնը, հանդիսաւոր թափօրով իջան Գեթեմանի ջրը, ուր Ս. Աստուածածնին տաճարին մէջ կատարուեցան «Հրաշափառ»-ով հանդիսաւոր մուտքը, կիրակմտից ժամերգութիւնը, և յաջորդ առաւօտեան ամբողջ կարգը: Այսօր, նոյն հանդիսաւորութեամբ մատուցուեցաւ Ս. Պատարագը Ս. Կուսի Գերեզմանին վրայ: քարոզեց՝ պատարագիչ Տ. Գեորգ Վրդ. ձանսըգեան, «Տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ» բնաբանով, ցոյց տուաւ թէ

Աստուծոյ Հոգին երբ դռնէ իր բնակարանը անհատներու մէջ, ընտանիքներն ալ աւելի բարգաւաճ կը դառնան, ներգործութեամբը նոյն Հոգիին: Ընտանիքը կորկն է ազգութեան: Զօրաւոր ընտանիքներ երաշխիքն են ազգի մը զօրութեան:

✽ 12 Սեպտ. Կիր. — Գիւտ Գոսլոյ Ս. Աստուածածնի. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածնին. քարոզեց Տ. Հայկազուն Վրդ. «Զի՞ երկնիք թերահաւատք» բնաբանով: Գոյց տուաւ թէ մարդիկ վախը ունին իրենց ինչքերուն և կեանքի կորուստին: Բայց անոնք միայն որոնց հաւատքը անխախտ կը մնայ իրենց հոգիներուն մէջ, վախ չեն ունենար ոչ մէկ նրվածկան ուժէ:

✽ 19 Սեպտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն. քարոզեց Տ. Յուսիկ Վրդ. «Տէր ամբարտաւանից հակառակ կայ. տայ շնորհս խնարհայ» բնաբանով, ցոյց տուաւ թէ հպարտը յանձնապատասխան եմն է. հպարտը կը մոռնայ իր արարած ըլլալը, և կը փորձէ ինքզինքին աստուածային դեր մը տալ: Նոյն է պարզան ընկերութիւններու, որոնք տիրապետութեան մոլութեան են բռնուած:

ԳԵՐ. Տ. ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔ. ՍԽԻՄԷԵԱՆ ՄԵՐ ՄԷՋ

Պէշրութի Հայոց Հոգեւոր Հովիւ և Կաթողիկոսական Փոխանորդ Գեր. Տ. Արտաւազդ Արք. Սիւրմէեան, ընդառաջելով Միաբանութեան Պատ. Տնօրէն Ժողովոյ և Ս. Աթոռոյ Գահակալ Ամեն. Ս. Պատրիարք Հօր հրահրին, 24 Սեպտեմբերին Ս. Աթոռս ժամանեց: 25 Սեպտեմբերի Շաբաթ երեկոյին նախագահեց Խաչվերացի Նախատեսակի հանդիսաւոր արարողութեան, որուն աւարտումին, Ս. Խաչի մասունքը, «Նշանաւ ամենայաղթ» շարականի երգեցմամբ փոխադրուեցաւ Ս. Գլխադրի մատուռէն դէպի Մայր Տաճարի Աւագ Սեղանը: Նոյն հանդիսաւորութեամբ կատարուեցաւ նաև Հսկումի կարգը: Յաջորդ առաւօտ, 26 Սեպտեմբեր, Գերաշնորհ Սրբազան հիւրը, մատոյց Խաչվերացի Ս. Պատարագը: Ս. Խորհուրդին ներկայ էր նաև Բոլոնիական հիւպատոսը իր տիկնոջ հետ, և Սրբազան Պատարագիչը ծանուցումին մէջ յայտնեց թէ մասնաւոր Հոգեհանգստեան պաշտամունք պիտի կատարուէր թէ՛ Մեղեղոնեան հարազատ եղբայրներու յիշատակին, ինչ որ աւանդական սովորութիւնն է, և թէ վերջին այս պատերազմի մէջ ինկող Բոլոնիական նահատակներու համար: Ապա Աւետարանի միութարութիւնը տուաւ հաւատացեալ ներկաներուն, բնաբան առնելով առաքելական խօսքը՝ «Զարչարանս Քրիստոսի եւ ի մարմնի իմում կրեմ»: Գոյց տուաւ թէ ինչպէս հին ցեղերու մէջ անգամ իրենց ցեղապետին Նշանը կը կրէին այդ ցեղին անդամները, ըսելու համար որ իրենք ծառաներն են այդ ցեղապետին: Քրիստոսի հետևորդներն ալ հպարտութեամբ և համբերութեամբ պէտք է կրեն այն շարչարանքները որոնք Քրիստոսի անունով կը տրուին իրենց:

Եւ ասիկա կարելի է՝ սիրով և հաւատարմութեամբ միայն փարելով այն գաղափարին, այն ճանապարհին, որ Քրիստոսով տրուեցաւ աշխարհին:

Նոյն երեկոյին կատարուեցաւ աւանդական հանդիսաւոր արարողութիւնը Խաչիբեյի Անգաստանին, նախագահութեամբ Գեր. Տ. Արտաւազդ Արքեպիսկոպոսի:

27 Սեպտ. Երկուշաբթի Մեռեղոյն, ի Ս. Փրկչ մատուցուած պատարագին ժարդեց Տ. Արտաւազդ Արք. Սիւրմէեան, «Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս և ի ձեռն Յիսուսի առաւել լիցին և մխիթարութիւնն մեր...» ցոյց տուաւ թէ զմուս արայ իրողութիւնը՝ հաշտեցումը չարչարանքի և մխիթարութեան կեանքերուն, Յիսուս թէ՛ իր անձին վրայ իրագործեց և թէ փոխանցեց զայն իր հետեւորդներուն: Հայ քրիստոնեային համար կեանքը Խաչի ճամբան պէտք է ըլլայ, որովհետեւ անոր ետեւն էայ լոյսի, մխիթարութեան կեանքը:

Գեր. Տ. Արտաւազդ Արքեպ. ստիպողաբար իր թեմական պաշտօնին վերադարձաւ 29 Սեպտ. Զորեքշաբթի առաւօտ, անգամ մը ևս այս առթիւ ցոյց տալով իր սէրը հանդէպ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ և մասնաւորաբար Առաքելական Ս. Աթոռոյս և Միաբանութեան: «Սրան» յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան կը յայտնէ իր շնորհակալութիւնը, Գերաշնորհ Սրբազանին պատրաստակամ անձնուիրութեանը համար:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* 13 Յուլ. Դշ.— Բոլոնիոյ Նոր հիւպատոսը այցելութեան եկաւ Ս. Պատրիարք Զօր՝ ընդունուեցաւ Պատր. Փոխ. Դէորդ Վրդ. և Թարգման Հայր Գրիգորի կողմէ:

* 14 Յուլ. Դշ.— Գաղղիոյ Ազգ. տօնին առթիւ յանուն Ս. Պատրիարք Զօր շնորհաւորութեան գային Պատր. Փոխ. Դէորդ Վրդ. և Թարգման Հայր Գրիգոր:

* 16 Յուլ. Ուր.— Բոլոնիոյ Նոր հիւպատոսին փոխադարձ այցելութեան գային Պատր. Փոխ. Դէորդ Վրդ. Թարգման Հայր Գրիգոր և Պր. Կարպիս:

* 17 Յուլ. Շբ.— Բոլոնիոյ Զօրավար Սիքորըքի մահուան առթիւ Տօմինիքեաններու Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ կատարուած Հոգեհանգստեան ներկայ եղան Պատր. Փոխ. Դէորդ Վրդ. և Թարգման Հայր Գրիգոր:

* 12 Օգոս. Եշ.— Հայ Հռովմէականաց Կաթ.— Պատրիարք իր եկեղեցականներով Ս. Պատրիարք Զօր այցելութեան եկաւ և ընդունուեցաւ Ս. Աթոռոյս միաբան հայրերու կողմէ:

* 16 Օգոս. Բշ.— Յանուն Ս. Պատրիարք Զօր Հայ Հռովմէականաց Կաթ.— Պատրիարքին փոխադարձ այցելութեան գային Գեր. Լուսարարապետ Հայր. Դէորդ Վրդ. և Թարգման Հայր Գրիգոր:

ՍԱՀԱԿ Ծ. ՎՐԴ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

1943 Օգոստոս 28ին սրի կաթուածէն իր հանգիստը մտաւ Ս. Արտոյս վասակաւոր միաբաններէն Սահակ Ծ. Վրդ. Աստուածասուրերուն: Հանգուցեալը ծնած էր 1870ին ի Կ. Պոլիս (Պէտլիքաւ), պատանութեան հասակէն կրօնաւորութեան իր ուխտը կ'ընէ նախ Նոստալիքի մէջ, ապա Էջմիածին կը տարուի եւ հոն կը շարունակէ իր ծառայութիւնները իբրեւ օգնական լուսարարապետի: Վարդապետ կը ձեռնադրուի 1903ին Սեւանայ վանքին մէջ: Վարժ է Հալաբնի, Հոփսիմեանց եւ Շողակարի վանքերու տնօրէնները: Տարիներով հսկող եւ հոգածու եղած է Հայրիկեան բանգարանին, եւ ժամանակ մըն ալ Զուարթնոցի հնուրիւններուն: Մեծ սէր ունէր հնագիտական առարկաներու նկատմամբ, մանաւանդ պատկերներու. շատ կը սիրէր ալյումներ կազմել արժէք ներկայացնող սեղերու, անձերու եւ առարկաներու պատկերներէն: Իր վանականի խցիկը հաւաքածոյաբան մըն էր պատկերներու:

1910ին Տարօն կը հրաւիրուի Խաթախանեան Ներսէս եպիսկոպոսէն, հոն կազմակերպելու Մշոյ Ս. Կարապետի մասնադասը եւ բանգարանը, որուն կը նուիրէ 322 հասոր գիրքեր, 22 կտոր ձեռագիր եւ եկեղեցական ուրիշ իրեղեններ: 1912ին վերստին ուխտաւորութեամբ կ'այցելէ Նոստալիքի Ս. Յակոբայ վանքը եւ կը միաբանակցի անոր:

Հրատարակած է Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եւ շրջակայից Պրակ Ա. (Տպ. Վաղարշապատ 1910) Բ. Պրակ (Տպ. Նոստալիք 1913): Ձեռքի տակ ունէր բազմաթիւ բանկազին լուսագրուած պատկերներ Հայաստանի վանքերու եւ բանկարժէք հնագիտական առարկաներու, նպատակ ունէր զանոնք բոլոր պատշաճ ծանօթագրութիւններով հրատարակել, բայց իր սպառիչ հիւանդութիւնը տարիներէ ի վեր՝ արգելեկաւ իր այլ փափաքին:

Ան կը մեռնի իր պարսփր կատարած միաբանի մը զոհուանակութեամբ: Իր շէնքով եւ հիւրասէր բնակարանները զինք սիրելի բերեին բոլորին: Հանգիստ իր հոգիին: